ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ, ՊԱՏԱՆԴՆԵՐԻ, ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՊԱՀՎՈՂ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՊԱՐԶՄԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՊ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

«Ռազմագերիների, պատանդների, անհայտ կորածների և պահվող այլ անձանց ճակատագրի պարզման և հայրենիք վերադարձնելու խնդիրները» հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմայով հարցի քննարկման ժամանակ հարակից զեկուցումներով հանդես կգան Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը, Ազգային անվտանգության ծառայության ռազմական հակահետախուզության դեպարտամենտի պետի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

2021 թվական, նոյեմբերի 16

Երևան

ԱԺՈ - 43 - Լ